ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 25-Լ

«03» 04 2023 թ. քաղ. Երևան

ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քրեական վարույթներով (գործերով) պետությանը և համայնքներին պատճառված վնասի, վնասի վերականգնման, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության գործառույթի իրականացման շրջանակներում հայտնաբերված՝ պետությանը և համայնքին պատճառված վնասի, հայտնաբերված վնասի վերականգնման միասնական հաշվառում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 31-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել քրեական վարույթներով (գործերով) պետությանը և համայնքներին պատճառված վնասի, վնասի վերականգնման, առերևույթ հանցանք կատարած անձանց և մեղադրյալների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ձևաչափը (այսուհետ՝ Ձևաչափ 1)՝ համաձայն Հավելված N 1-ի (կցվում է):

2. Սահմանել պետական շահերի պաշտպանության գործառույթի իրականացման շրջանակներում հայտնաբերված՝ պետությանը և համայնքին

պատճառված վնասի, հայտնաբերված վնասի վերականգնման վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ձևաչափը (այսուհետ՝ Ձևաչափ 2)՝ համաձայն Հավելված N 2-ի (կցվում է):

3. Սահմանել Ձևաչափ 1-ի և Ձևաչափ 2-ի լրացման, դրանք ՀՀ գլխավոր դատախազության իրավասու ստորաբաժանումներ ներկայացնելու, ստացված տեղեկություններն ամփոփելու և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնելու կարգը և ժամկետները՝ համաձայն Հավելված N 3-ի (կցվում է):

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի մարտի 4-ի թիվ 20/2(5)-17-20 և ի լրումն դրա տրված՝ 2021 թվականի հուլիսի 2-ի թիվ /20.8/9719-2021 հանձնարարականները:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ